

ԿԱՐԳԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋԱՐԿ

Posted on June 19, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Տօրթ. Սարգիս Ատամ, Գերմանիա, ՀէտըOnline, 11 Յունիս 2011



Վերջին օրերուն, հայ մամուլի մէջ սիրտի խոր ցաւով կը կարդանք, Գարեգին Բ. Ներսէսեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրօք կարգաւոյծ եղած 40 հոգեւորականներու առնչեալ Վեհափառի հասցէին ուղղուած տհաճ ու ժխտական հրատարակութիւնները ու մեկնաբանութիւնները:

Տօրթ. Սարգիս Ատամ, Գերմանիա, ՀէտըOnline, 11 Յունիս 2011



Վերջին օրերուն, հայ մամուլի մէջ սիրտի խոր ցաւով կը կարդանք, Գարեգին Բ. Ներսէսեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրօք կարգաւոյծ եղած 40 հոգեւորականներու առնչեալ Վեհափառի հասցէին ուղղուած տհաճ ու ժխտական հրատարակութիւնները ու մեկնաբանութիւնները:

Նշենք, որ Վեհափառ Հայրապետը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուած է, 27 Հոկտեմբեր 1999 թուականին, եւ օծուած է 4 Նոյեմբեր 1999 ին: Հոս նաեւ կուզենք յիշեցնել թէ 1 յունիս 2011 թուականին կարգաւոյծ հռչակած է, Չուիցերիոյ Հայ համայնքի Տ. Աբել Քիւն Մանուկեանը:

Տեր Աբել Մանուկեան իր կարգաւոյծ հռչակման կապակցութեամբ հանդէս եկաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. ուղղարկած հետեւեալ նամակով: «Ոչ ձեզմէ կարգ ստանալն է պատիւ, եւ ոչ էլ կարգաւոյծ ըլլալը՝ անպատվութիւն: Դուք կը կարծէք թէ, կարգաւոյծ ընելը ձեր զօրութիւնն է, միևնչոյե ալն ձեր ամենամեծ տկարութիւնն է: Նկատի ունենալով, որ կարգաւոյծման սոյն տնօրինումը եկեղեցական, վարդապետական, ծիսական, կանոնական, կարգապահական ոչ մէկ հիմք ունի, եւ ընդհակառակն արդիւնք է, ընդամենը կաթողիկոսի վստահված իշխանութեան չարաշահումին, այս որոշումը կը յայտարարեմ անարդար, անընդունելի եւ ապօրէն»:

Այս դէպքի առնչեալ հայ մամուլի մէջ տեղ առին զանազան մեկնաբանութիւններ, եւ Գարեգին Բ. Վեհափառի հասցէին ուղղուած ժխտական հրապարակագրութիւններ, ուր կը մատնանշուէր թէ Գարեգին Բ. օրօք 40 հոգեւորականներ կարգաւոյծ, իսկ 300 հոգեւորականներ ալ ձեռնադրուած են:

Ըստ Հայ եկեղեցւոյ պատմութեան մասնագէտներու կարելի չէ յստակօրէն նշել թէ, Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ, Գարեգին Բ. օրօք ամենաշատ հոգեւորական կարգաւոյծ եղած են, թէ, ոչ:

Անշուշտ թէ, այսպիսի հրատարակութիւնները մեր բոլորը կը յուզէ, ցաւ կը պատճառէ հայ ժողովուրդի զաւակներուն, սակայն նախ կը վիրաւորէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Վեհափառ հայրապետի եւ Մայր Աթոռի հեղինակութիւնը, եւ կը

վնասէ նաեւ .1710 տարուայ Հայ Առաքելական Եկեղեցին:

Անտարակոյս շատ խրթին ու դժուար է կարգալուծման հետ կապուած խնդիրներուն ու հարցերուն լուծումը, սակայն, առաջնորդուելով «Հայ Եկեղեցին, Ժողովրդավար Եկեղեցի Է» նշանաբանէն, արդեօք հնարաւոր չէ, առաջարկել, թէ կարգալուծութեան տնօրինութիւնը յանձնել, ոչ թէ մի միայն Կաթողիկոսութեան Իշխանութեան ուսերու վրայ ,այլ Կաթողիկոսի տնօրէնութեամբ ու նախագահութեամբ կազմել Հայ Առաքելական Եկեղեցոյ Նուիրապետական Աթոռներու Իշխանաւորներու մասնակցութեամբ «ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆ» եւ կամ «ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀՍԿԻՉ» մարմինի մը, այս ձեւով կարելի կ'ըլլայ անելի ժողովրդավար որոշումներ հռչակել:

Մեկնաբանութիւն

Gagik Movsisyan14:53 - 12 հունիսի, 2011

Հարգելի Տոքտոր Ատամ, Հավանաբար Դուք մոռացել եք, որ Ձեր Գերմանիո թեմի սարկավագաց դասը, ինչպէս նաև Նոյվիդի, Բիլեֆելդի, Մյունխիխի, Գյոպպինգենի և Նյուրնբերգի եկեղեցական համայնքները 2006 թվականին (այսինքն դեռևս 5 տարի առաջ) բարձրացրել էին նույն այդ հարցերը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գահակալ - Գարեգին Բ-ի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների առջև:

Դուք նաև մոռացել եք, որ Ձեր թեմի այդ սարկավագներն ու համայնքային վարչության անդամները առ այսօր ոչ մի լուրջ պատասխան չեն ստացել բարձրացված խնդրի վերաբերյալ: Արդյոք Ձեր թեմակալ առաջնորդը Ձեզ չի պատմել, թե ինչպէ՞ս է դրանից հետո բարկացել կաթողիկոսը: Մի հատ եթե ուզում եք, նորից հարցրեք Ձեր առաջնորդ սրբազանին ու ինքը կ'պատմի Ձեզ բոլոր տհաճ մանրամասնությունները:

Կաթողիկոսը չկարողանալով թաքցնել իր գայրոյթը պահանջել է ուրարագուրկ-կարգալուծ անել Գերմանիո թեմի բոլոր սարկավագներին... Իսկ Ձեր թեմի առաջնորդն էլ դրանից հետո կաթողիկոսի երեսին ուղղակի ասել է. "Դե ուրեմն դրանից հետո, Դուք ինքներդ կգաք, ամեն կիրակի մեր համայնքներում շապիկ կհագնեք, խորան կբարձրանաք ու բուրվառ կգցեք..."

P.S. Հարգարածան Տոքտոր Ատամ, Դուք խոսում եք վեհափառի հասցեին ներկայումս հրապարակվող "անհարիր" հողվածների մասին ու մեղադրում ազատ մամուլը: Շատ ներողություն, իսկ Դուք արդյո՞ք չէք մտածել, թե որքան ժամանակ դեռ պետք է մեր եկեղեցում շարունակվեն վերոհիշյալ կամայականությունները: Դուք չե՞ք կարծում, որ արդեն բանը բանից անցել է և ժամանակն է որ Հայ Եկեղեցում վերջ գտնեն բոլոր այս միապետական անկարգությունները:

